

ԲԱՆԱՄԻՐԱԿԱՆ

Ս Ա Ն Ր Ա Պ Ա Տ ՈՒ Մ

1. — Յովհաննես Բժիշկ. — Բժշկութեան Գրքին (տպ. Երևան, 1987) մէջ, էջ 41, կը կարդանք. «Մեր ձեռքի տակ եղած փաստական տվյալները հնարաւորութիւն չեն ընձեռում աւելի ստոյգ պարզելու, թէ այդ երկու բժշկաներից որին է ակնարկում Բուռնիաթ Սեբաստացին»։ — Ակնարկուած բժշկաներէն առաջինը Յովհաննէս կ'ապրէր Թ. Դարուն, իսկ երկրորդը, նոյն անունով, ապրած է ԺԵ. Դարուն: Արդ՝ Յովհաննէս բժշկի կիրարկած ռամկորէն լեզուն, արտառոց ուղղագրութիւնը, և Յլամենգու քաղաքին յիշատակութիւնը ամենեւին չեն պատշաճիր Թ. Դարու Յովհաննէսին, բայց շատ յարմար կու գան ԺԵ. Դարու համանուն բժշկին:

2. — Թեղով. — Նոյն, էջ 86, տող 5-6, կը կարդանք. «զցաւն շուտ եփէ ի գլուխն հանէ, թէ զով խալտի»։ — Ուղղելի է՝ թէ զով [= շուտով]:

3. — Այն Կ. — Նոյն, էջ 89, տող 26-27, կը կարդանք. «և տաք ջրով բերարեբութիւն այն է»։ — Ուղղելի է. «և տաք ջրով վերարեբութիւն այն է»:

4. — Մի sur. — Նոյն, էջ 116, տող 30, կը կարդանք. «և միս և գինի մի տուր»։ — Աւելի ուղիղ է «մի տար», ինչպէս ունի D ձեռագիրը:

5. — Խանձաղ. — Նոյն, էջ 127, տող 3, կը տեսնուի «շահմ-ի խանձաղ»: Սպասելի էր որ այդ բառը արուած ըլլար Բառարանին մէջ «բնագրի ուղղագրութեամբ», բայց արուած է տարբեր ձևով, «Շահմ-ի հանդալ» (էջ 172):

Հետեւեալ նշումները կը վերաբերին Ղրիմեցի Յակոբ Վարդապետի «Տոմարագիտական Աշխատութիւններ» գործին, որ տպուած է Երևան, 1987ին:

6. — էջ 87, տող վարէն 11, «թէ ոչ՝ սխալ է զարուհօտն»։ — Ուղղելի՝ սխալ է:

7. — էջ 106, տ. վերէն 9. «և պատճառ է զբարբակ ծիրն»։ — Ուղղելի՝ պատճառ է:

8. — էջ 152, տող 8, «Զայս ոչ է թէ վասն պակաս գոլոյ»։ — Ուղղելի՝ ոչ եթէ:

9. — էջ 153, տող 6, «ի նիսան եղիցի զԶատիկս»։ — Ուղղելի՝ Զատիկս:

10. — էջ 155, տ. վարէն 4, «զամսին մեծ տառապանս կացեալ»։ — Ուղղելի՝ ի մեծ, ինչպէս ունին երկու ձեռագիրներ (էջ 318):

11. — էջ 156, տող 5, «Աստուած և բաց զմիտս նոցա»։ — Ուղղելի՝ Աստուած երաց:

12. — էջ 159, տ. վարէն 2, «վասն չորիցն ապրիլի շատ սասցի այսքան»։ — Ուղղելի՝ շատասցի այսքան: Նոյնպէս, էջ 164, տող 18, «Բայց այսքան շատ սասցի», կարգալ՝ շատասցի:

13. — էջ 163, տող 8, «զոր կէտ ունին ի յեղանակք տարւոյն»։ — Ուղղելի՝ ունին յեղանակս, ինչպէս կը տեսնուի տարբնթերցուածներուն կարգին (էջ 320):

14. — էջ 166, տող 20, «վասն որոյ բուն հարցուք»։ — Ուղղելի է՝ բուն հարցուք, ինչպէս ունին երկու ձեռագիրներ (էջ 321):

15. — էջ 179, տող 25, «աւուրք պաշտաման նոցա», Ղուկ. Ա. 40. — Ուղղելի՝ պաշտաման նորա, Ղուկ. Ա. 23:

16. — էջ 211, տող 25-26. «և խրատիչ ոչ գտանի զնա, ետ վարդապետ բուրբ աշխարհի ի երեսս երկրից»։ — Ուղղելի՝ և խրատիչ ոչ գտանի, զնա ետ վարդապետ բուրբ աշխարհի ի երեսս երկրից: Վերջին բառին կը վկայեն ութ ձեռագիրներ (էջ 348):

17. — էջ 263, տող 13, «ի միոյ գծից բաղկանայ»։ — Ուղղելի՝ ի միոյ գծէ, ինչպէս կը գտնուի երկու ձեռագիրներու մէջ:

18. — էջ 267, տող 17, «և ոչ ի տեղւօջէ իմիք»։ — Ուղղելի՝ և ոչ յանտեղւօջէ իմիք, համաձայն տարբնթերցուածին (էջ 372):

19. — էջ նոյն, տող 26, «և Աստուած գալով ամենուրեք»։ — Ուղղելի՝ գալով, ըստ երեք ձեռագիրներու (էջ 372):

20. — էջ 268, տող 12, «զոնէ ըստ աղօտ տեսանել»։ — Ուղղելի՝ ընդ աղօտ (Ա. Պետ., Ա. 12):

ՆՈՐԱՅՐ Ն. ԲԻԷԿԱՆԴԱՑՈՒ ԱՆՏԻՊ «ՀԱՏԸՆՏԻՐ ՏԱՂԱՐԱՆ»Ը

Նորայր Ն. Բիւզանդացին (1845-1915 ղեկա. 25) նախ եղել է Վիննետիկեան Մխիթարեան Միաբանութեան անդամ, ապա 1876ին աշխարհականացել է. որպէս քահանայ կոչուել է Հայր Յարութիւն Թերզոնցի, 1869 թ. ապրիլին ուղարկուած է Պոլիս, 1870-1872 թթ. պաշտօնավարում Բաղկեդոնի (Գատը Բէօյ) Մխիթարեան վարժարանում: Ետքը նախապես աշխատել դեռևս վանքում ձեռնարկած Քրիստոսեանցիներէն-հայերէն բառարանի վրայ: Վանքում եղած ժամանակ, ուր երկու տարի վարել է մտահոգարանապետի պաշտօնը և կարգի դրել գրադարանի բոլոր գրքերը, Հ. Յ. Թերզոնցը հետաքրքրուել է հայկական միջնադարեան տաղերով: Պոլսում տաղարան հրատարակելու միտք է ունենում, ինչպէս վկայում են ստորև հրատարակուող նրա երկու նամակները և ուրիշներ. ուստի հաւաքում է տաղեր, որքան հնարուոր է. այս նպատակով դիմում է Ս. Ղազարում մնացած իր եղբայրակիցներին երկուսին: 1870 թ. օգոստոսի 19ին գրել է ոմն Հայր Սահակին. «Աղաչեմ տալ ընդօրինակել Ձարնհի Եիշմանեան կամ այլում ումեք ի մանկաւոյդ ստանաւոր մի Ամիր Մուսէ Նաղաշի, զոր գտցես ի Հայկարան Գ, էջ 997, առանց զգուշացուցանելոյ տեսչիդ թէ վասն իմ իցէ. նոյնպէս ի Հայկարան Զ, էջ 309, զպատմութիւն առմանն կ. Պոլսոյ գրեալ յԱթրակասէ Անկիւրացւոյ, դարձեալ տացես գաղափարել որ ինչ գտանի զԱռաքելէ Բաղիշեցւոյ ի Հայկարան Գ, էջ 459,

982, 1005. Հայկարան Զ, էջ 801, և Հայկարան Յիշատակարանաց, էջ 745, 811, 1052: Խնդրեմ ի սիրոյդ մատուցանել ինձ անյապող զայս ծառայութիւն: Եւ միւս թուղթս յանձնել ի ձեռս Հ. Վահանայ ամենայն զգուշութեամբ, զի մի՛ անկցի ի ձեռս այլոց: Ողջ լեր» (Նորայրի դիւան, Թղթ. 4:1-14, Վալ. 4:7, էջ 30, մեր էջակալմամբ): «Միւս թուղթը» հետևեալն է, նոյն օրը գրուած. «Պատուական եղբայր Հ. Վահան, աղաչեմ օրինութեանդ ընդօրինակել վասն իմ գտաղս Յրկան երգասացի, որոց սկիզբն է շիմ սիրա, վատին մի՛ լսել», Տղր. ԺԶ, էջ 407, և «Կ'ուզե՞ս որ ազիդ կենաս», Տղր. ԺԵ, էջ 214. դարձեալ գտաղս Յովհաննիսի Թուրքուրանցւոյ՝ «Քիմսէ պէնի պիմէդ իտի», Ոսկեփորիկ Գ, էջ 7. «Ըզքեզ Աստուած խոստովանիմ», գիրք ստանաւորաց, էջ 730, թիւ ձեռագրին՝ 171. Գ. գ. «Ըզքեզ ունիմ յոյս լ'ապաւէն» ի նմին ձեռագրի, էջ 733» (ն. տ.): 1870 թ. գեկտեմբերի 1ի նամակում դարձեալ Հ. Սահակից խնդրում է. «Կ'աղաչեմ որ օրինակել տուած տաղերդ առաջին առթով անմիջապէս ձեռքս հասցնես. Հ. Վահանին սիրոյդ յանձնած տաղերէն զատ, կը խնդրեմ որ աս հետևեալներն ալ գրել տաս. 1. Յովհ. Թուրքուրանցւոյ «Տող ի Լիպարիտն», Տողարան ԺԵ, 249. 2. «Տեսայ իմ հոգուս հոգին», Տողր. ԺԶ, 437. 3. «Երթայաք ու գայաք», Տողր. ԺԶ, 485. 4. «Աստուած իմ Յիսուս», Տողր. ԺԶ, 581. 5. Առաքել վարդապետի սեղանօրհնէք որ կը սկսի «Օրհնեսցուք մեք միարան», Ոսկեփորիկ Գ, 433. 6. «Իմաստնոյն կեանքն», Տողր. Զ, 189: Ասոնցմէ զատ Այիշանէն տեղեկացիր, բայց առանց ամենևին իմ անունս տալու, թէ ո՞ր տաղարանին մէջ է Յովհ. Թուրքուրանցւոյն այն տաղը յորում կը պատմէ Նարեկացւոյն եփած աղանիները պահող օրով կենդանացնելու հրաշքը, և մէյմ'ալ Դաւիթ Սարգստեանցւոյն ծաղկանց տաղը ուր շատ մը ծաղիկներու անուններ կը գանուին, և ասոնք ալ ընդօրինակել աւեր, բայց կ'աղաչեմ կտրինձ զտափարոզի մը յանձնես և խնամով բողոք-

21. — էջ 272, առջ 23, «որպէս շարագրեալ է ի Գիրք. սանդուխտ». — Ուզգելի՛ ի Գիրք Սանդոց, ինչպէս ունի ձեռագիրներէն մին (էջ 374) կամ, ի Գիրք Սանդուղք (Սանդուխտ), որ գործն է Յովհաննէօ Կլիմաքոսի:

22. — էջ 304, առջ 28, «յոր և երթալն էր». — Ուզգելի՛ երթալն էր, ըստ վկայութեան երկու ձեռագիրներու (էջ 387):

Ն. ԱՐԲ. ԾՈՒՎԱԿԱՆ